«Քայլ առ քայլ» բարեգործական հիմնադրամ

«Նախադպրոցական հաստատության մանկավարժական աշխատողների մասնագիտական կարողությունների և հմտությունների զարգացման» ծրագիր

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ Սաների հայրենաճանաչողության ձևավորման կարևորությունը

Դաստիարակ՝ Քնար Մուրադյան

Մանկապարտեզ՝ «Արտաշատ համայնքի Նարեկ գյուղի Արևիկ մսուր-մանկապարտեզ» ՀՈԱԿ

ԵՐԵՎԱՆ 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ……..3

ԳԼՈՒԽ 1. ՀԱՅՐԵՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆԻՑ ԴԵՊԻ ՀԱՅՐԵՆԱՃԱՆԱՉՈՂՈՒԹՅՈՒՆ……5

Հայրենաճանաչողության ձևավորման կարևորությունը նախադպրոցական տարիքի երեխաների համար……5

ԳԼՈՒԽ 2. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔԸ……10

Պարապմունքի պլան ……...10

Դիտարկում ……..14

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ……..……15

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ……16

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Այն ժամանակաշրջանում, որտեղ ապրում է մեր հասարակությունը՝ գտնվելով հարևան երկրների կողմից իրականացվող մարտահրավերների կենտրոնում, առաջնահերթություն է առաջացրել, որպեսզի փոքրուց սկսած երեխայի մեջ սերմանվի սեր, գիտելիք առ հայրենիք, քանզի այդ կետից է սկսում երեխայի արժեքային համակարգի ձևավորումը, որը նրանց թույլ կտա դառնալ հասարակության լիիրավ անդամ, ինչպես նաև հայրենիքին արժանի զավակ: Հայրենքի նկատմամբ սերը սկսվում է հենց հայրենաճանաչողությունից: Եվ հենց այստեղ նպատակահարմար է հիշել Ռաֆֆու մեջբերումը. «Ով չի ճանաչում իր հայրենիքը, չի կարող ճշմարիտ սիրել նրան»:

Վերոնշյալ հատվածում թեմայի արդիականությունն արդեն իսկ երևաց: Հետազոտության նպատակն է նախադպրոցական տարիքի երեխաների հայրենասիրական դաստիարակությունը ոչ միայն սիրո դաստիարակություն է հայրենի տան, ընտանիքի, մանկապարտեզի, քաղաքի, հայրենի բնության, իր ժողովրդի, իր ազգի մշակութային ժառանգության, այլ ազգությունների ներկայացուցիչների նկատմամբ հանդուրժողական վերաբերմունքի, այլև հարգալից վերաբերմունքի դաստիարակություն աշխատավորի և նրա աշխատանքի արդյունքների, հայրենի հողի, հայրենիքի պաշտպանների, պետական խորհրդանիշների, ավանդույթների և ազգային տոների նկատմամբ:

Պետք է հաշվի առնել, որ յուրաքանչյուր երեխա զգում է զգացմունքների օգնությամբ իրեն շրջապատող իրականությունը: Սա է պատճառը, որ ցանկացած աճող սերնդի հայրենասիրական դաստիարակությունը պետք է սկսվի սիրո զգացումն իր հայրենի գյուղին, քաղաքին, երկիրին: Եվ այդ ամենի արդյունքում կարող ենք անել հետևություն, որ փոքրուց երեխային պետք է ծանոթացնել հայրենիքի ամեն քարին, պատմամշակութային ժառանգություն հանդիսացող վայրերին, ինչպես նաև ՀՀ խորհրդանիշներին՝ օրհներգին, դրոշին, զինանշանին:

Հետազոտության արդյունքում արդեն իսկ կհիմնավորվի վերը նշված խնդիրները, հայրենաճանաչողության ուսուցման դաստիարակչական նշանակությունը:

Գ. Նժդեհի մեջբերումը կարող է ամբողջացնել վերը նշվածը. «Հայրենասիրութիւնը միայն ոչ որպես զեղեցիկ խօսք, այլ զգացում եւ գիտակցութիւն, ոչ որպես շրթունքի սէր, կամ իդէազուրկ խուժանավարի բարոյական մերկութիւնը ծածկող գեղեցիկ պատմուճան, այլ՝ պաշտամունք, կրօն»:

Հետազոտության ընթացքում առանձնացրել եմ հետևյալ բաժինները.

- Հայրենաճանաչողությունից դեպի հայրենասիրություն, որտեղ ներկայացրել եմ հայրենաճանաչողության կարևորությունը արդի ժամանակներում: Ներկայացրել եմ այստեղ նաև մի շարք հեղինակների և տեսաբանների կարծիք:
- Հաջորդ գլխում ներկայացրել եմ իրականացված հետազոտությունս՝ ընդգծելով նպատակներս ու վերջնարդյունքս և վերջում դիտորդի կողմից դիտարկումներ: Ընդհանուր աշխատանքս ամփոփված է եզրակացությամբ ու առաջարկություններով:

ԳԼՈՒԽ 1. ՀԱՅՐԵՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆԻՑ ԴԵՊԻ ՀԱՅՐԵՆԱՃԱՆԱՉՈՂՈՒԹՅՈՒՆ

Հայրենաճանաչողության ձևավորման կարևորությունը նախադպրոցական տարիքի երեխաների համար

Մատաղ սերնդի հայրենասիրական դաստիարակությունը մեր ժամանակի ամենաարդիական խնդիրներից մեկն է: Վերջին տարիներին մեր երկրում հսկայական փոփոխություններ են տեղի ունեցել: Սա վերաբերում է բարոյական արժեքներին, մեր պատմության իրադարձությունների նկատմամբ վերաբերմունքին: Երեխաների մոտ աղավաղված են հայրենասիրության, բարության, մեծահոգության մասին պատկերացումները: Փոխվել է նաև մարդկանց վերաբերմունքը հայրենիքի նկատմամբ: Այսօր նյութական արժեքները գերակշռում են հոգևորին: Սակայն անցումային շրջանի դժվարությունները չպետք է պատճառ դառնան հայրենասիրական դաստիարակության կասեցման: ***Հոգևոր և բարոյական դաստիարակության վերածնունդը Հայաստանի Հանրապետության վերածննդի քայլ է:***

Հայրենասիրությունը հայ ժողովրդի համար ունի իր ինքնատիպ առանձնահատկությունները՝ պայմանավորված ազգային էթնիկական անկրկնելի պատմական զարգացմամբ, հոգևոր ու նյութական մշակույթով, աշխարհաքաղաքական ու բնապատմական զարգացումներով պայմանավորված կյանքի ընթացքով, հայ էթնոսի արիական, աշխարհաստեղծ մենթալիտետով, ազգային ինքնագիտակցությամբ, ի վերուստ տրված հարատևման անհրաժեշտությամբ:

Այսօր աճող սերնդի դաստիարակության գործն ընթանում է տարբեր հանգամանքների ազդեցության ներքո՝ ժողովրդագրական, ազգային, մշակույթային, ընտանեկան, կրթական, հասարակական, սոցիալական և այլն: Հաշվի առնելով բազմաթիվ այս և այլ հանգամանքներ՝ ժամանակակից մանկավարժության համար խնդիր է դառնում սովորողների ազգային գիտակցության ձևավորումը սեփական ժողովրդի պատմության ու մշակույթի հենքի վրա՝ չանտեսելով համամարդկային արժեքները: Արժեքների բուրգի գագաթին գտնվող նվիրական ու մեծագույն արժեքը՝ հայրենասիրությունն է:

Հայրենասիրություն դաստիարակելը պահանջում է հետևողական, համբերատար աշխատանք, այն չի ձևավորվում միանգամից, դրա ակունքները շատ խորն են, գալիս են նախնիներից, սկիզբ են առնում ընտանիքում, բակում, ընկերական և հասարակական հարաբերություններում, դառնում կայուն որակ և անձի անբաժանելի մաս ու բնավորության գիծ: Դրանք ստանում են գաղափարական հիմնավորում և մարդը սովորում է, թե ինչպես

պետք է ապրի ու վարվի, որ պատշաճ ու հարիր լինի այն հասարակության ընդունած ու գործող նորմերին, որում ապրում է:

Ազգային արժեհամակարգի կրող յուրաքանչյուր երեխայի ձևավորման գործում կարևոր է դեր է խաղում հայրենասիրության, այնուհետև հայրենաճանաչողության դաստիարակությունը, որը սերմանում է նրանց մեջ սեր, անսահման նվիրվածություն, պատասխանատվություն հայրենիքի ամեն մետրի համար: Ցավոք, օտարածին բարքերի ազդեցությունը ներկա օրերում իր անդառնալի հետևանքներ է թողել և շարունակում է թողել, այդ իսկ պատճառով ընտանիքից սկսած յուրաքանչյուր ոք կրում է պատասխանատվությունը երեխայի հայրենասիրական դաստիարակության գործում: Դա բարոյական և հայրենասիրական կրթություն է, որը ամբողջ հանրային գիտակցության հիմնական բաղադրիչն է, որտեղ յուրաքանչյուր պետության կենսունակության հիմքը հիմնված է: Իրականացնելով այս խնդրի հրատապությունը ներկա փուլում, անհրաժեշտ է հասկանալ, որ նախադպրոցական տարիքի երեխաների անհատական կազմավորումը պարզապես անհնար է առանց փոքր տարիքի հայրենասիրական զգացմունքների ուսուցման:

Նախադպրոցական տարիքը անհատի ձևավորման ամենակարևոր ժամանակահատվածն է, երբ դրվում են քաղաքացիական որակների նախադրյալները, զարգանում են երեխաների գաղափարները մարդու, հասարակության և մշակույթի մասին: Նախադպրոցական կրթության որակի բարձրացումը պետությունը, հասարակությունը համարում են որպես գերակա խնդիր, և դրա իրագործման կարևորագույն երաշխիքն է՝ ստեղծել անհրաժեշտ համակողմանի նպաստավոր պայմաններ երեխայի լիարժեք և ներդաշնակ զարգացումն ապահովելու, սահուն անցումով դպրոցական ուսուցմանը նախապատրաստվելու գործընթացին[1]:

Հայրենասիրությունը կարելի է ձևակերպել որպես հասարակական կյանքի և պետության բոլոր ոլորտներին բնորոշ առավել նշանակալի, անգերազանցելի արժեքների համակարգ, ինչը հանդիսանում է անձի կարևորագույն հոգևոր սեփականություն ու բնութագրում է նրա զարգացման բարձրագույն մակարդակը և դրսևորվում է ինքնառեալիզացման ակտիվ գործընթացում՝ ի շահ Հայրենիքի բարօրության:

Այս կարևոր գործընթացում կարևոր է ինչպես ընտանիքի, այնպես էլ դաստիարակների լրացուցիչ միջամտությունը, ընդհանուր անցակացվող պարապմունքները, ազգային ավանդույթներին, տոներին, Հայաստանի Հանրապետության խորհրդանիշներին ծանոթությունը, ինչպես նաև էքսկուրսիաները, զբոսանքները: Հայրենասիրական

[1] Հ.Միտոյան, Լ.Սմբատյան, «Ուսումնական ձեռնարկ մանկապարտեզի համար», Երևան, 2018:

զգացմունքների ձևավորումն ավելի արդյունավետ է, եթե մանկապարտեզը սերտ կապ հաստատի ընտանիքի հետ:

Հայրենասիրական դաստիարակության մասին հայտնի մանկավարժ Յան Կոմենսկի գտնում է, որ հայրենասիրական դաստիարակության կարևորագույն խնդիրներից է մարդկանց օգնելու ձգտում սերմանելը: Իր «Մեծ դիդակտիկա»-ում նա գրում է. «Միայն այն ժամանակ երջանիկ օրերը կգան մեզ համար, եթե բոլորը գործեն հօգուտ համընդհանուր բարօրության»[2]:

Հայրենաճանաչողության դաստիարակությունը դաստիարակների և սաների միջև մի գործընթաց է, որն ուղղված է հայրենասիրական զգացմունքների զարգացմանը: Նպատակը կրթված ու պատասխանատու հայրենասերի դաստիարակումն է, ով սիրում է իր հայրենքը, ով պաշտպանում է այն, հոգ տանում հայրենի բնությունը, հարգում պատմամշակութային ժառանգություն հանդիսացող վայրերը: Ավագ նախադպրոցական տարիքի երեխաների մոտ հայրենասիրությունը սերմանելու նպատակն է ձևավորել նրանց բարի գործեր և արարքներ կատարելու անհրաժեշտություն: Այս հարցի շրջանակներում կարևոր է, որպեսզի երեխան փոքրուց ճանաչի հայրենիքի սահմանները, իմանա այն հայորդիներին ու անմահ հերոսներին, ովքեր պաշտպանել են իրենց հայրենիքը այրան գնով: Դաստիարակի, ծնողի մոտեցումը, աշխարհայացքը այս հարցի շուրջ ևս էական դերակատարություն ունի, քանի որ նրա վերաբերմունքը ևս կախված է ավագ սերնդի վերաբերմունքից: Ինչպես նշում է Մակարենկոն. «Ձեր ընտանիքում և Ձեր ղեկավարությամբ աճում է ապագա քաղաքացին: Այն ամենը, ինչ կատարվում է երկրում, ձեր հոգու և ձեր մտքի միջոցով պետք է գա երեխաներին»:

Ընտանիքի և երկրի համար ամենաանհրաժեշտը, միևնույն ժամանակ ամենաբարդն ու խրթինը հայրենիքին արժանի քաղաքացի ձևավորելն է: Երեխաների բարոյական և հայրենասիրական դաստիարակությունը նախադպրոցական ուսումնական հաստատության հիմնական խնդիրներից մեկն է:

Յուրաքանչյուր դաստիարակ, կրելով այս հսկայական պատասխանատվությունը, նախ և առաջ պետք է անցնի ինքնակրթման մի շրջան: Առաջնահերթ հենց նա պետք է լավ ճանաչի հայրենի հողը: Հարց է առաջանում՝ ինչպես ապահովել և ճիշտ կազմակերպել ավելի արդյունավետ կրթական աշխատանք, որպեսզի նախադպրոցական տարիքի երեխաների մեջ սերմանեն արժեքային կողմնորոշումներ, քաղաքացիականություն, հայրենասիրություն և սեր իրենց հայրենիքի հանդեպ:

[2] Յան Ամոս Կոմենսկի, Մեծ դիդակտիկա, Եր, 2010, էջ 115:

Հայրենասիրական դաստիարակության հետազոտություններում առանձնահատուկ նշանակություն ունեն Վ. Սուխոմլինսկու աշխատանքները: Նա, ընդգծելով ոլորտի դժվարությունները, գտնում էր, որ «հայրենիքի նկատմամբ սերը կամքի ուժի է վերածվում այն ժամանակ, երբ մարդու գիտակցության մեջ ամրապնդվում են հայրենի վայրերի և լեզվի հետ կապված կերպարներ, երբ առաջանում է հպարտության զգացում, որ այս ամենը քո երկիրն է»[3]: Իսկ հայ մեծ լուսավորիչ, մանկավարժ Խ. Աբովյանը հետևյալ կերպ է մեկնաբանում հայրենասիրությունը. «Ապրել ու մեռնել հայրենիքի համար, ահա խնդիրը, որ իբրև նպատակ՝ ես ընտրել եմ ինձ համար իմ մանկության օրերից»[4]:

Գ. Նժդեհը երիտասարդ սերնդի դաստիարակության հիմքը համարել է հայրենաճանաչումը, որը սնում է հայրենասիրության զաղափարը և ազգային զաղափարախոսության ամուր հիմքերի վրա ձևավորում աշխարհաճանաչումը: Այդ մասին է վկայում նաև նրա բանտային գրառումներում հայազգի սերունդներին հղված պատգամը. «Հայրենիքը չի տրւում այնպէս, ինչպէս ժառանգւում է հայրենական հարստութիւն: Դա ձեռք է բերւում ամէն մի սերունդի եւ նրա առանձին անդամի կողմից. ձեռք է բերւում հայրենաճանաչումով, հայրենապաշտութեամբ, նրան արժանի դառնալու ձգտումով»[5]:

Ըստ մեթոդաբանական գրականության՝ կարելի է առանձնացնել առաջադրանքների մի ամբողջական համալիր.

- ✓ ՀՀ խորհրդանիշների ծանոթացում,
- ✓ Երեխաների իմացություն իր արմատների մասին, որտեղից են սերունդ առել իր նախնիները,
- ✓ Այցելություններ Հայաստանի տեսարժան վայրեր, թանգարաններ,
- ✓ Բնակավայրի ուսումնասիրություն, սեփական փողոցի, այդտեղ գտնվող յուրաքանչյուր վայրի իմացություն,
- ✓ Իր բնակավայրի ժողովրդի առանձնահատկություններն ու սովորույթները, ինչպես նաև ՀՀ օրենսդրությամբ ամրագրված տոների և հիշատակի օրերի իմացություն
- ✓ Հայրենասիրական երգերի, ազգային-ազատագրական ու ժողովրդական երգերի ուսուցում:

Այսպիսով, կատարելով մեջբերումներ ոչ միայն հայ մեծերից, կարող ենք համոզվել, որ միանշանակորեն բոլորն էլ կողմ են, որպեսզի ամեն ինչ սկսվի փոքրուց: Մենք առանցքային

---

[3] Սուխումլինսկի Վ. Ա., Սիրտս նվիրում եմ երեխաներին, Կոլեկտիվ դաստիարակության մեթոդիկա, Եր., Լույս, 1986թ., 551 էջ:
[4] http://forum.armedu.am/showthread.php/854- Հայ դասականների մտքի գանձարանից:
[5] Գարեգին Նժդեհ. Ասույթներ, Ե., 2020, էջ 11:

ենք համարում այդ ամենը, առանցքային ենք համարում, որպեսզի երեխան ճանաչի սեփական հայրենիքը, սեփական գյուղն ու փողոցը, սակայն հետազոտությունների արդյունքում նախադպրոցականներից քչերն են իմացել, թե որն է իրենց քաղաքը կամ գյուղը, ում անունով է հավերժացված այն փողոցը, որտեղ գտնվում է իրենց տունը, կամ տան շրջակայքում գտնվող հուշարձան-կոթողների նշանակությունը: Դա այն ամենն է, ինչը պետք է սերմանեն երեխայի մեջ:

Ելնելով այս ամենից՝ կարելի է ընդհանրացնել հայրենասիրության առավել էական կողմերը և սահմանել այն: Հայրենասիրությունը անձի առավել նշանակալից բարոյական արժեքներից է, անհատի կարևորագույն հոգևոր ձեռքբերումը, որը բնութագրում է նրա զարգացման բարձրագույն մակարդակը և արտահայտվում է ինքնադրսևորման ակտիվ գործունեությամբ՝ ի բարօրություն հայրենիքի:

ԳԼՈՒԽ 2. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔԸ

- ✓ Հետազոտության ժամանակ կիրառել եմ ԽԻԿ համակարգը:
- ✓ Այն իրականացրել եմ ավագ խմբի երեխաների հետ:
- ✓ Պարապմունքը դիտարկվել և արձանագրվել է դաստիարակի կողմից:
- ✓ Աշխատանքս պլանավորել եմ համալիր ծրագրով , հաշվի առնելով տարիքային չափորոշչային զարգացման ոլորտը:

ՊԱՐԱՊՄՈՒՆՔԻ ՊԼԱՆ

Թեման՝ «Իմ հայրենիք՝ Հայաստան»

Նպատակը՝ ծանոթացնել ՀՀ տեսարժան վայրերին, փորձել բացատրել՝ դրոշի, զինանշանի, օրհներգի դերը մեր կյանքում, ինչպես նաև ազգային պարին:

Զարգացնել՝ երեխաների խոսքը, պատկերացումը, հաղորդակցումը:

Միջավայրը՝ խաղասենյակ:

Նյութերը՝ ձայնարկիչ, դրոշակներ, կրծքանշաններ զինանշանի տեսքով, բանաստեղծական հատվածներ, նկարներ Հայաստանի տեսարժան վայրերից, քարտեզ, գունավոր կավիճներ, քարտիկներ՝ տարբեր պատկերներով, ստվարաթուղթ:

Ընթացքը՝

- **Խթանում**

Առավոտ:

Երեխաներին տրվում են հարցեր այն մասին, թե արդյոք տեսել են իրենց շենքերն ամրացված ցուցանակ, որտեղ նշվում է փողոցի անունը, եթե այո ապա այն ո՞ւմ կամ ինչի՞ հետ էր կապված: Հաջորդ հարցն այն մասին կլինի, թե արդյոք երեխաները ուշադրություն դարձրել են ճանապարհին գտնվող խաչքարերին, ինչպիսի շինություններ կային:

Երեխաներն արտահայտվում եմ ու քննարկում միմյանց հետ՝ ինչպիսի տեսք ունի իրենց տունը:

- **Իմաստի ընկալում**

Երեխաները սեղանների դիմաց շրջանաձև հավաքված են:

Նախքան բանաստեղծության ընթերցումը՝ երեխաներին ասացի, որ բանաստեղծությունը կառուցված է այն բառերից, որոնք ես քարտիկների միջոցով ցույց կտամ: Եվ շատ հետաքրքիր ստացվեց, գրեթե կռահում էին տողերի դասավորվածությունը:

Բանաստեղծության ընթերցում՝

ԻՄ ՀԱՅՐԵՆԻՔԸ

Հայրենիքն ինչ է,
Ասեմ՝ իմացեք.
Դա մեր դպրոցն է
Ու մեր քաղաքը՝
Մեր Երևանը՝
Բոլոր հայերի
Մայրաքաղաքը,
Կապույտ Սևանը,
Արագած սարը,
Ձով անտառները,
Հայկական նուռը,
Համեղ ծիրանը,
Գյուղի տատիկիս
Թոնրի լավաշը,
Դուդուկի տաղը,
Մեր այբուբենը...
Օ՛, ինչքան ասեմ,
Էլի քիչ է, քիչ:
Իմ Հայրենիքը՝
Ամեն, ամեն ինչ:

Փակցնելով ՀՀ դրոշը՝ հանձնարարեցի, որպեսզի երեխաները կառուցողականներից ընտրելով դրոշին համապատասխան գույները, հավաքեն դրոշը:

Հարց ուղղելով երեխաներին, փորձեցի հասկանալ արդյոք նրանք տեղեկացված են յուրաքանչյուր գույնի նշանակության մասին:

Երեխաները պատասխանում են՝

կարմիրը - կակաչները, այրունը, ուրախությունը,

կապույտը - երկինքը, լճերը, խաղաղությունը,

ծիրանագույնը – լեռները, ձորերը, աշունը, ծիրանը:

Ամփոփելով երեխաների պատասխանները՝ ներկայացնում եմ յուրաքանչյուրի նշանակությունը:

Հայաստանի դրոշի գույներն են՝

կարմիրը - մեր ժողովրդի հաղթանակն է, հայ ժողովրդի մշտական պայքարը հարատևման, քրիստոնեական հավատքի, Հայաստանի անկախության և ազատության համար,

կապույտը - խորհրդանշում է հայ ժողովրդի ապրելու կամքը խաղաղ երկնքի ներքո,

ծիրանագույնը - մեր ժողովրդի ստեղծագործ աշխատանքը, տաղանդն ու աշխատասիրությունը:

Այնուհանդերձ, փակցնելով զինանշանը, խնդրեցի նրանց, որպեսզի առանձնացնեն՝ ինչ պատկերներ տեսան նրանք:

Երեխաները պատասխանում են՝

Մասիսն ու Սիսը, առյուծը, արծիվը, նավ, վահան:

Այստեղ ևս ամփոփում եմ զինանշանի վրա եղած պատկերները: Այնուհետև հարց եմ ուղղում երեխաներին՝ արդյոք գիտեն Հայաստանի օրհներգը:

Երեխաները պատասխանում են՝

Առավոտյան հեռուստացույցով լսել են:

Օրհներգը լսելիս կամ երգելիս ոտքի ենք կանգնում և աջ ձեռքը սեղմում սրտին: Դա նշանակում է, որ սիրում ու հպարտանում ես քո հայրենիքով:

Եվ միասին փորձում ենք երգել՝ անցում կատարելով ֆիզկուլտ դադարի:

Ֆիզկուլտ դադար՝ «Հայելի» խաղ

Այնուհետև՝ մոտենալով պատին փակցված լուսանկարներին, խնդրում եմ, որպեսզի երեխաները նշեն այն վայրերը, որտեղ նրանք այցելել են:

Այս փուլն ամփոփում եմ քարտեզի վրա Հայաստանի տեղը նշելուց հետ, որից հետո բոլորը միաձայն պնդում էին, որ այն նման է աղջկա:

- **Կշռադատման փուլ**

Այստեղ ամփոփում ենք՝ ինչ նոր բան սովորեցին նրանք, ինչը ամենաշատը հետաքրքրեց նրանց, որտեղ կցանկանային այցելել նրանք միասին:

Օրվա հաջորդ մասում:

Երեխաներին բաժանելով թերթիկներ, ասացի, որպեսզի նկարեն այն, ինչն առաջինն են մտածում, երբ լսում են հայրենիք կամ Հայաստան բառը:

Նկարել էին իրենց տունը, բակը, դրոշը, լեռները, Սևանա լիճը, որը նրանց ամենից շատն էր տպավորել, հայոց անուշահամ մրգերը:

Օրվա վերջում:

Մանկապարտեզի բակում գունավոր կավիճներով նկարեցինք:

Իմ հետազոտության արդյունքում պարզ դարձավ, որ երեխաները մեծ սիրով ու հարգանքով են լցված դեպի հայրենիք և նրանց փայլող աչքերը լուսավոր ապագայի խորհրդանիշը դարձան: Պարզ դարձավ նաև այն, որ ծնողները ևս մեծ սիրով ու պատրաստակամությամբ ծանոթացնում են հայրենի բնությանն ու տեսարժան վայրերին, կազմակերպում էքսկուրսիաներ:

Հետազոտության վերջնարդյունքը՝

- ✓ Կկարողանան պատկերի միջոցով կազմել իրենց խոսքը:
- ✓ Կկազմակերպեն տարբեր էքսկուրսիաներ:
- ✓ Ուշադրություն կդարձնեն շրջապատում գտնվող վայրերին, շինություններին, խաչքարերին ու հուշարձաններին:
- ✓ Տեղեկացված կլինեն հայրենիքի պատմության հետ:

ԴԻՏԱՐԿՈՒՄ

Այն խնդիրները, որոնք դրված էին պլանի սկզբում, բարձր մակարդակով իրագործվեց, որի արդյունքում երեխաները մեծ ոգևորությամբ ու բազմաթիվ գիտելիքներով ավարտեցին իրենց օրը մանկապարտեզում:

Պարապմունքի ողջ ընթացքում սաները մեծ հետաքրքրություն են ցուցաբերել յուրաքանչյուր տեղեկատվության շուրջ: Բոլորի սիրտն էլ կրում է այն մեծ սերը, որը հայրենիքին է պատկանում: Նրանք ակտիվ էին, լցված հայրենասիրական ոգով, տրմադրությամբ: Ընդգրկված էր յուրաքանչյուրը:

Պարապմունքի համար ընտրված դիդակտիկ նյութերը համահունչ էին թեմային, որն էլ ամբողջացրեց ու հարստացրեց պարապմունքի ողջ ընթացքը: Այն անցկացվեց ԽԻԿ համակարգով:

Այն թեման, որի վրա դաստիարակը կատարել էր շեշտադրումը, արդի էր: Ամեն ինչ սկսվում է հենց առաջին քայլից և այսօր այդ առաջին քայլերը մենք տեսանք: Նախադպրոցականի մեջ հայրենաճանաչողության սերմերը ճիշտ ցանվեցին այսօր՝ համապատասխան տարիքային խմբի ծրագրին: Ողջունելի էր այդ ամենը ներկայացնել տարիքային խմբին համապատասխան:

Կարող ենք միանշանակ պնդել, որ դաստիարակը հասավ իր առջև դրված նպատակին:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Այսպիսով՝ հետազոտության վերջնարդյունքում տեսնում ենք թեմայի արդիականությունը: Երեխաների հետաքրքվածության ցուցաբերումից հետո մնում է միայն ասել, որ յուրաքանչյուրն էլ պատրաստ է քաղել նոր պտուղներ: Եվ հայրենասիրությունը՝ որպես վեհագույն արժեք, հիմնաքարն է հայրենիքի հզորացման ու բարգավաճման համար:

Ապագան գալիք սերնդի ձեռքում է և նրանց կրթելու ու դաստիարակելու այս դժվարին փորձությունը հենց մեզ է բաժին հասել: Եվ յուրաքանչյուր ոք, գիտակցելով այս խրթին գործի կարևորությունը, պետք է լցվի մեծ պատասխանատվությամբ ու պատրաստակամությամբ, որպեսզի կարողանա կրթել հայոց հողին ու հայրենիքին արժանի զավակ:

Փոքրուց երեխաների մեջ պետք է ձևավորել ու զարգացնել ազգային ինքնագիտակցությունը և դրա համար հիմք է հանդիսանում հայրենասիրական դաստիարակությունը:

Առանձնացնելով մի քանի առաջարկություններ՝ կասեմ՝

Փոքրիկ հայրենասերի դաստիարակությունը սկսվում է նրա համար ամենամտերիմից՝ հայրենի տնից, փողոցից, որտեղ նա ապրում է, մանկապարտեզից:

- ✓ Երեխայի ուշադրությունը հրավիրեք հայրենի քաղաքի կամ գյուղի գեղեցկությանը:
- ✓ Կարևորեք հայոց մաքրամաքուր ու անաղարտ մայրենի լեզվի ահռելի նշանակությունը:
- ✓ Կազմակերպելով զբոսանքներ՝ պատմեք, թե ինչ կա շրջակայքում, ծանոթացրեք յուրաքանչյուր օբյեկտին ու պատմեք նշանակության մասին:
- ✓ Ցույց տվեք յուրաքանչյուր աշխատանքի կարևորությունը՝ բանվորից և ուսուցչից մինչև զինվորական:
- ✓ Փորձեք կազմակերպել շաբաթօրյակներ, հոգ տարեք բնության մասին:
- ✓ Սովորեցրեք, որպեսզի ճիշտ գնահատի իր և ուրիշների գործողությունները:
- ✓ Հիշեցրեք, որ ամեն անհատից սկսած ձևավորվում է ողջ հասարակությունը և այն, որ յուրաքանչյուրն ունի պատասխանատվություն հայրենիքի հանդեպ:
- ✓ Պատմեք թե՛ անցյալի փառավոր էջերի, թե՛ պարտությունների մասին, խոսեք անմահացած հերոսների մասին, ավանդույթների, ինչպես նաև մշակույթի մասին:
- ✓ Եվ վերջում ամենակարևորը. ***սովորեցրեք սիրել յուրաքանչյուրին:***

Եվ ինչպես ասել է Ջորջ Բայրոնը. «Նա, ով չի սիրում իր հայրենիքը, ոչինչ չի սիրում»:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Չիբուխչյան, Լ. Սարգսյան՝ Մայրենի լեզվի պարապմունք, մանկապարտեզի ավագ խումբ՝ ուսումնամեթոդական ձեռնարկ:
2. Ա.Գևորգյան, Ազգային կրթության դերն ու նշանակությունը սովորողների հայեցի դաստիարակության գործընթացում, Երևան 2002:
3. Мария Борисовна Зацепина. Дни воинской славы. Патриотическое воспитание дошкольников. Пособие для педагогов дошкольных учреждений.
4. Дмитриева Э. А. Нравственно-патриотическое воспитание дошкольников.
5. Էդ. Վինոգրադովա Ա. Մ., Բարոյական զգացմունքների կրթություն ավագ նախադպրոցականների մոտ, -Մ., 1980թ.: